

Հիմնական դրույթներ

- Ճիշտ այնպես, ինչպես Եվրոպայի խորհուրդը պարբերաբար արշավներ էր կազմակերպում Եվրոպան մահապատժից ազատելու նպատակով, այն այժմ աշխատում է ողջ մայրցամաքով մեկ արգելել երեխաների նկատմամբ մարմնական պատժի կիրառումը:
- Բռնությունը մարդու իրավունքների խոշոր ոտնահարում է, և եթե սխալ է չափահաս մարդուն հարվածելը, ապա սխալ է նաև հարվածելը խոցելի երեխային: Երեխաներն ունեն իրենց մարդկային արժանապատվության և ֆիզիկական ամբողջականության նկատմամբ հարգանքի արժանի լինելու և օրենքով հավասար պաշտպանություն ստանալու միևնույն իրավունքները:
- 2007թ. մարտին Ավստրիան, Բուլղարիան, Խորվաթիան, Կիպրոսը, Դանիան, Ֆինլանդիան, Գերմանիան, Հունաստանը, Հունգարիան, Իսլանդիան, Լատվիան, Նիդեռլանդները, Նորվեգիան, Ռումինիան, Շվեդիան և Ուկրաինան ընդունեցին օրենքներ, որոնք արգելում էին երեխաների մարմնական պատժը բոլոր հանգամանքներում: Եվրոպական այլ երկրներ այն արգելել են դպրոցներում կամ պատժիչ հաստատություններում, բայց դեռևս լիովին չեն տարածել այս արգելքը:
- Եվրոպայի խորհուրդը ցանկանում է, որպեսզի երեխաների մարմնական պատժն արգելվի իր 47 անդամ պետություններից յուրաքանչյուրում, և դրական ծնողավարության ծրագրեր մշակվեն կառավարությունների կողմից՝ խրախուսելու ծնողներին բռնությունից զերծ դարձնել իրենց ընտանիքները:

Ամփոփում

Եվրոպայի խորհուրդը Եվրոպայում մարդու իրավունքների, այդ թվում նաև երեխաների իրավունքների առաջնորդող պաշտպանն է: Անցյալում կարևոր քայլեր են ձեռնարկվել երեխաներին պաշտպանելու նպատակով: Դրանց թվում՝ ուղղորդող դատավճիռները Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, որոնք վիճարկում են երեխաների մարմնական պատժը դպրոցում, պատժիչ համակարգը ընտանիքում, ինչպես նաև Մարդու իրավունքների հանձնակատարի, Նախարարների կոմիտեի, Խորհրդարանական վեհաժողովի և Եվրոպական սոցիալական խարտիայի հանձնախմբի կողմից մարմնական պատժի դատապարտումը:

Մարմնական պատժի վերացմանն ուղղված այս արշավը Եվրոպայի խորհրդի «Կառուցենք Եվրոպա երեխաների համար և երեխաների հետ» ծրագրի մի բաղադրիչն է. եռամյա մի ծրագիր, որի նպատակն է երաշխավորել երեխաների իրավունքների ճանաչումը և այդ իրավունքների նկատմամբ հարգանքը: Ծրագիրը հիմնված է չորս սկզբունքի վրա՝ երեխաների պաշտպանություն, բռնության կանխարգելում, հանցագործների հետապնդում և երեխաների լիիրավ մասնակցություն:

2006թ. մարմնական պատժի արգելումը դարձավ ոչ թե զուտ տարածաշրջանային այլ համաշխարհային նպատակ: Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի հետազոտությունը երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ 2009թ. սահմանել է որպես համաշխարհային արգելման հասնելու թիրախ:

Հարցեր և պատասխաններ



Տեղեկատվական թերթիկ

Ի՞նչ է մարմնական պատիժը:

Մարմնական պատիժը երեխաներին խփելու գործողությունն է: Չափահասները մեծ հակում ունեն հորինել մեղմատություններ, որոնք նրանց հնարավորություն են տալիս ավելի հանգիստ զգալ իրենց, ինչպես ապտակ կամ քոթակ: Իրականությունն այն է, որ երեխայի համար այս ամենը բռնություն է, և եթե դրանք ուղղված լինեն չափահասներին, ապա քրեական հարձակում կլինեն:

Ինչու՞ պետք է արգելել մարմնական պատիժը:

Երեխաները մարդկային էակներ են, իսկ մարդու իրավունքները պաշտպանված են միջազգային իրավունքով, այդ թվում հենց Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների կոնվենցիայով: Մարդու իրավունքների ամենահիմնական սկզբունքներից մեկը բռնության պաշտպանիչից ազատ ապրելն է: Եթե մենք չենք պաշտպանում երեխաներին բռնությունից, ապա մենք ոտնահարում ենք այս հիմնարար սկզբունքները:

Իսկ ծնողների իրավունքներ՞որը: Արդյո՞ք մարմնական պատժի վերացումը չի ոտնահարում ընտանիքների իրավունքները կամ կրոնի ազատությունը:

Մարդու իրավունքների օրենսդրությունը ցույց է տալիս հակառակը: Ծնողները, ովքեր Մարդու իրավունքների եվրոպական դատարան բողոք են ներկայացրել քոթակելու իրենց իրավունքը պաշտպանելու նպատակով, մշտապես տանուլ են տվել իրենց դատը: Այս դատավարությունները վերաբերում էին եկեղեցական ծխական համայնքների անդամներին և մի անգլիացի տղայի խորթ հորը, որը պնդում էր, որ «ողջամիտ պատիժ իրականացնելու» իրավունք ունի:

Որոշ կրոններ երեխաներին ծեծելու կողմն են, և անհրաժեշտ է, որ հասարակությունը դատապարտի դրանք ընդհանուր առմամբ: Այժմ հոգևոր առաջնորդներ են միանում այս արշավին՝ վերացնելու մարմնական պատիժը: 2006թ. Ճապոնիայի Կյոտո քաղաքում տեղի ունեցած Կրոններն հանուն խաղաղության համաշխարհային ասամբլեային ավելի քան 800 հոգևոր առաջնորդներ հաստատեցին երեխաների նկատմամբ բռնության դեմ պայքարելու իրենց կրոնական միջոցները՝ կառավարություններին կոչ անելով ընդունել համապատասխան օրենքներ և արգելել բռնությունը, այդ թվում՝ մարմնական պատիժը:

Արդյոք այս նախագիծը չափից դուրս հավակնոտ չէ՞: Կարո՞ղ ենք իսկապես յուրաքանչյուր երկրի հանդեպ արգելել մարմնական պատիժը:

Մարմնական պատիժն արգելելու պայքարը երկարատև ու դժվարին է: Լեհաստանն առաջին անգամ կիրառեց արգելումը 1783թ., Ավստրիան, Բելգիան և Ֆինլանդիան հետևեցին նրա օրինակին 1900թ.-ին, իսկ Ռուսաստանը մարմնական պատիժը վերացրեց 1917թ.: Միացյալ Թագավորությունում, որտեղ ընդհանուր արգելումը շարունակում է հակասական խնդիր լինել, առաջին վիճարկումը գրանցվեց 1669թ., երբ «մի կայտառ տղա» Խորհրդարանին խնդրագիր ներկայացրեց «իր ազգի երեխաների անունից» դպրոցներում մարմնական պատժին վերջ դնելու վերաբերյալ: Ավելի քան երեք դար անց միայն կատարվեց նրա ցանկությունը՝ շնորհիվ Կրթության մասին 1983թ. որոշման:

Որպեսզի մարմնական պատժի արգելումը հաջողվի, անհրաժեշտ է օրենքի և կրթության բարեփոխման զուգորդում՝ հասարակությունների կողմից բռնության մերժումը խթանելու և ընտանիքներում համագործակցության նոր դրական ուղիներ ապահովելու նպատակով: Նման օրինակ է Շվեդիան, որը 1979թ. դարձավ առաջին երկիրն աշխարհում, որը բացարձակ արգելեց մարմնական պատիժը: Այն միևնույն ժամանակ միջոցներ ստեղծեց լավ ծնողավարության ուսուցման նպատակով:

COUNCIL OF EUROPE

HUMAN RIGHTS | DEMOCRACY | RULE OF LAW



COUNCIL OF EUROPE | CONSEIL DE L'EUROPE

Տեղեկատվական թերթիկ

Ինչու՞ է այդքան դժվար արգելք կիրառելը:

Չափահասների մեծ մասն ունեցել են այնպիսի ծնողներ, որոնք կարծում էին, թե կարգապահությունը կամ վերահսկողությունը ներառում է ֆիզիկական բռնություն: Շատ ծնողներ այժմ քրթակում են իրենց երեխաներին: Նրանց համար դժվար է ընդունելը, որ իրենք սխալ են վարվում, չնայած որ պարզից էլ պարզ է, որ ուժեղ և ֆիզիկապես ամուր չափահասը կարող է մեծ վնաս պատճառել ավելի փոքր, թույլ ու խոցելի երեխային: Մեծ աշխատանք է անհրաժեշտ, որպեսզի ստիպենք չափահասներին ընդունել դառը ճշմարտությունը և հասկանալ, որ ընկճվածության, սթրեսի և զայրույթի արտահայտման այլ եղանակներ կան:

Ո՞րն է հաջորդ քայլը:

Եվրոպայի խորհուրդը ցանկանում է, որ յուրաքանչյուր երկիր օրենքներ ներմուծի մարմնական պատժի դեմ և ծնողներին սովորեցնի այլ կերպ նայել իրենց երեխաների հետ իրենց փոխհարաբերություններին: Լավ ծնողավարության գործելակերպը կարևոր նշանակություն ունի եթե ուզում ենք, որ առողջ երեխաները մեծանալով դառնան առողջ չափահասներ: Մենք հույս ունենք, որ կառավարությունները ոչ միայն կպատասխանեն այս կոչին՝ օրենքով արգելելով մարմնական պատժը, այլև կրթական դասընթացներ կիրականացնեն իրազեկության բարձրացման նպատակով և կընդունեն միջոցառումներ, որոնք հասարակությանն անկասկած հեռու կպահեն բռնությունից: Երեխաների նկատմամբ բռնությունը սխալ է, և յուրաքանչյուր չափահասի անհրաժեշտ է ընդունել դա:

Վերաբերմունքը, որն անհրաժեշտ է փոխել

«Երեխաները պետք է մի քիչ կարգապահ լինեն: Սա ինձ երբեք չի վնասել»:

Հոգեկան առողջության հետազոտությունները մշտապես ցույց են տալիս կապը բռնության և վատառողջ լինելու միջև: Չափահասները, որոնց նկատմամբ ոտնձգություններ են կատարվել երեխա ժամանակ, ողբերգական շղթայի օղակ են դառնում: Նրանք նվազ հավանականություն ունեն վայելելու ուրախ ու բավարարված կյանք և ավելի են հակված բռնության դիմելուն, քանի որ դա է խնդիրներ լուծելու այն միակ եղանակը, որ իրենց սովորեցրել են երեխա ժամանակ: Նույնիսկ եթե ազդեցությունն ակնհայտ չէ, անհնարին է ինչպիսին կլինեինք բռնության զոհ չլինելու դեպքում:

«Բոլորը քննադատում են մարմնական պատժի նկատմամբ արգելքի սահմանումը. Մարդկանց վերաբերմունքը փոխել հնարավոր չէ»:

Շվեդիայի դեպքը հակառակն է ապացուցում: Երբ Շվեդիան առաջինը խոսեց արգելքի մասին, բավական մեծ դիմադրության հանդիպեց: Սա օրենքի վերածվեց 1979թ.: Իրազեկության մակարդակի բարձրացմանն ուղղված քարոզարշավները և լավ ծնողավարության դասընթացները մեծ փոփոխությունների հանգեցրին վերաբերմունքում: 1995թ. ծնողների ընդամենը 6 տոկոսն էր կարծում, որ ընդունելի է երեխային ապտակելը:

«Լավ, այն դեպքերը, որոնց տեղեկանում ենք մամուլից, տխուր են, բայց ընտանիքներում բռնությունը խիստ հազվադեպ երևույթ է: Ընտանիքը երեխաների համար ապահով դրախտ է»:

Այն դեպքերը, որոնց տեղեկանում ենք մամուլում, ընդամենը սառցաբեկորի գազաթն են: Հետազոտությունները ցույց են տալիս, որ բռնության և ոտնձգությունների հիմնական մասը տեղի է ունենում տանը: UNICEF-ի Innocenti Report Card-ը ցույց է տվել, որ ամեն տարի 15 տարեկանից ցածր 3,500 երեխա է մահանում արդյունաբերականացված

COUNCIL OF EUROPE

HUMAN RIGHTS | DEMOCRACY | RULE OF LAW



COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Տեղեկատվական թերթիկ

Երկրներում ֆիզիկական հարձակման և անուշադրության հետևանքով:

«Չարևանա ապտակում է իր երեխաներին, բայց դա իմ գործը չէ»:

Բռնությունն անտեսելը հավասարազոր է բռնություն գործելուն: Գուցե ճիշտ չէ հանցագործին դեմ առ դեմ առճակատելը, սակայն օգնելու տարբեր ուղիներ կան: Կարելի է նախագգուշացնել ոստիկանությանը կամ իշխանություններին, կամ կարելի է օգնել երեխային միանալ թե՛ հեռախոսագծին: Դուք նաև կարող եք միանալ երեխաների նկատմամբ բռնության դեմ արշավին ամբողջ Եվրոպայում արշավն իրականացնող բազմաթիվ խմբերի միջոցով և լսելի դարձնել Ձեր ձայնը:

«Ծեծը խնայելով՝ կփչացնես երեխային. ես չեմ ուզում, որ իմ երեխաներն անդաստիարակ մեծանան»

«Մտրակ, որտեղից ես գալիս, դրախտից, ինչ ես բերել, խելք ու միտք»

Երեխաներին դաստիարակելու լավագույն ճանապարհը բռնությունից զերծ միջավայրի ստեղծումն է, որտեղ իսկական կարգապահությունը հիմնված է փոխադարձ հարգանքին և հանդուրժողականությանը: Երեխաներին խփելը իրականում վարքի վատ օրինակ է՝ երեխաներն ընդօրինակում են այն, ինչ անում են իրենց ծնողները, և ոչ այն, ինչ նրանք ասում են: Կարգապահության առավել դրական դրսևորումները կօգնեն նրանց մտածել այլոց, ինչպես նաև իրենց գործողությունների հետևանքների մասին:

«Երեխաները պինդ են, նրանք շուտ են մոռանում»:

Փոքրիկ երեխաների հետ հարցազույցները մի շարք երկրներում ցույց են տվել վնասի չափը: «Դա քեզ ներսից է վիրավորում», - ասել է մի յոթ տարեկան երեխա: ՅՈՒՆԻՍԵֆ-ի իրականացրած հարցումների արդյունքում պարզվել է, որ երեխաները ցանկանում են ունենալ իրերը քննարկելու հնարավորություն և ոչ թե ծեծվել կամ գոռոցներ լսել:

«Ծնողների հիմնական մասն իրենց երեխաներին չեն ծեծում»:

Չետագոտությունները ցույց են տալիս, որ երբ մարմնական պատիժը դեռ օրինական է, ծնողների հիմնական մասը դիմում են դրան: 2002թ. Սլովակիայի հանրապետության կատարած հետազոտության արդյունքում պարզվել է, որ ծնողների 98.6 տոկոսի կարծիքով ծնողները պետք է ծեծեն իրենց երեխաներին, իսկ 42 տոկոսի կարծիքով՝ ծեծեն ինչ-որ առարկայով:

«Լավ, բռնությունը հաճելի բան չէ, բայց դժվար թե այն գերակայություն լինի: Այն չի՞ վնասում տնտեսությանը, այնպես չէ՞»:

Բռնությունը դրան արժե: Դրան առողջապահական ծառայությունների համար. առաջին հերթին վնասված վերջույթներ, իսկ ավելի ուշ՝ ծեծված կյանքեր, քանի որ ավելի մեծ տարիքի երեխաները կամ չափահասները, ովքեր մանուկ ժամանակ ենթարկվել են ոտնձգությունների, դիմում են թմրանյութերի, ալկոհոլի կամ պորտաբույծ կյանք են վարում իրենց խնդիրներից փախչելու համար: ԱՅԿ (Առողջապահության համաշխարհային կազմակերպություն) 1999թ. կանխարգելման վերաբերյալ զեկույցում նշվում է, որ երեխայի նկատմամբ սեռական ոտնձգության մարդկային և ֆինանսական ծախսերը թանկ են հասարակության համար. «Կանխարգելման ծախսերը շատ ավելի փոքր են, քան նախնական և երկարաժամկետ ծախսերի զուգորդումը... անհատի, ընտանիքի և հասարակության համար»:

COUNCIL OF EUROPE

HUMAN RIGHTS | DEMOCRACY | RULE OF LAW



COUNCIL OF EUROPE | CONSEIL DE L'EUROPE

Տեղեկատվական թերթիկ

«Փայտերն ու քարերը կարող են կոտրել նրանց ոսկորները, բայց բառերը երբեք վնաս չեն կարող հասցնել: Ուստի եթե չեմ ծեծում իմ երեխային, չեմ կարող վնաս պատճառել, այնպես չէ»:

Պատիժը, որը չի ներառում բռնություն, կարող է նույնքան ցավոտ լինել: Եվրոպայի խորհրդի աշխատանքը ցույց է տվել, որ մտավոր բռնությունը, ինչպես երեխաներին սպառնալը, ծաղրելը կամ վախեցնելը, առողջական լուրջ խնդիր է Եվրոպայում: Երեխաների վրա ազդում է նաև ծնողների միջև բռնությունը: Լավագույն լուծումն է, որ կառավարությունները օժանդակություն տրամադրեն ծնողներին՝ օգնելով նրանց ճիշտ հակազդել:

«Ծնողներն իրավունք ունեն դաստիարակել իրենց երեխաներին այնպես, ինչպես համար են համարում: Այդ իրավունքը կարելի է վիճարկել միայն ծայրահեղ դեպքերում, ինչպիսին երեխայի նկատմամբ ոտնձգությունն է»:

Մարդու իրավունքները չեն սահմանափակվում Ձեր տան դռնից դուրս: Երեխաներն ունեն միևնույն իրավունքները, ինչ-որ ընտանիքի անդամները: Այլևս նրանց չպետք է ծեծեն, ինչպես անուսինը իրավունք չունի ծեծել իր կնոջը: Երեխաներն իրենց ծնողների սեփականությունը չեն. նրանք մարդիկ են սեփական իրավունքներով:

Լրացուցիչ տեղեկատվության համար դիմել՝

Արշավների իրականացման թիմի առաջնորդ Քեթի Բըրթոնին

Հեռ.՝ +33 (0) 3 88 41 28 93

Ֆաքս՝ +33 (0)3 88 41 39 11

cathie.burton@coe.int

30.08.2007

COUNCIL OF EUROPE

HUMAN RIGHTS | DEMOCRACY | RULE OF LAW



COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE